UK International Development
Partnership | Progress | Prosperity

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

oxYGen

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2025

Բովանդակություն

01 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4

02 ՆԱԽԱԲԱՆ 5

03 ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ՝ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 6

04 ՀՀ-ՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 7

05 ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 11

06 ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ. ՓՈՒԼԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ 14

07 ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 18

08 ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 21

09 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ 25

10 ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՑԻԿԼԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 28

11 ԳԶԲ-Ի ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 30

12 ԳԶԲ-Ի ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ 46

13 ՀԱՎԵԼՎԱԾ. ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ 47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՋԲ	Գենդերազգայուն բյուջետավորում
ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
ՄԾՇ	Միջնաժամկետ ծախսերի շրջանակ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
CEDAW	Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա
OECD	Organisation for Economic Co-operation and Development Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի գործընկերներ,

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է հետևողական քայլեր ձեռնարկել գենդերային հավասարության ապահովման և հանրային կառավարման համակարգում ներառականության խորացման ուղղությամբ: Այս գործընթացում կարևոր դեր ունի գենդերազգայուն բյուջետավարումը՝ որպես գործիք, որը հնարավորություն է տալիս հանրային միջոցների բաշխման և օգտագործման մեջ հաշվի առնել կանանց և տղամարդկանց կարիքները, իրավունքներն ու հնարավորությունները:

Տեղական ինքնակառավարման մարմինները, բնակչությանն ամենամոտ կառույցը լինելով, ունեն բացառիկ հնարավորություն՝ իրականացնել համայնքային զարգացման ծրագրերի գենդերային ուղղորդում և ապահովել հավասար մասնակցություն ու արդյունք:

Այս նյութը մշակվել է՝ աջակցելու այդ ջանքերը՝ տրամադրելով գործնական ուղեցույց, որը հիմնված է Հայաստանի օրենսդրական դաշտի, ինչպես նաև՝ միջազգային և տեղական փորձի վրա:

«ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ ստեղծված այս ուղեցույցը նպատակ ունի խթանել գենդերազգայուն բյուջետավարման գործընթացի ներդրումը համայնքներում՝ որպես կայուն զարգացման, սոցիալական արդարության և արդյունավետ կառավարման կարևոր բաղադրիչ:

Համոզված ենք, որ այս գործիքը կծառայի որպես հուսալի ուղեցույց բոլոր այն մասնագետների, տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, ովքեր ձգտում են կառուցել ավելի հավասար, ներառական և պատասխանատու համայնքներ:

Շնորհակալություն ձեր նվիրվածության և համատեղ աշխատանքի համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ՝ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը, հավատարիմ մնալով միջազգային հարթակներում ստանձնած պարտավորություններին, իրականացնում է նպատակային ռազմավարություններ ազգային և տեղական մակարդակներում՝ ուղղված զարգացման նպատակների իրագործմանը և առկա խնդիրների լուծմանը: Եթե ազգային մակարդակում պետական բյուջեն կազմվում է ծրագրային ձևաչափով միայն 2018 թվականից, ապա համայնքներում արդեն վաղուց թվային բյուջեի կողքին իրականացվում է նաև ծրագրային բյուջետավարում՝ կարևորելով ֆինանսական միջոցների արդյունավետ և չափելի ծախսման հնարավորությունները:

Ուրախալի է, որ Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը՝ իր օրենսդրական և ենթաօրենսդրական ճկուն ձևակերպումներով, հնարավորություն է տալիս կյանքի կոչել այնպիսի նախաձեռնություններ, որոնք ուղղված են համայնքի բարօրությանն ու բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանությանը: Այդպիսի նախաձեռնություններից է ԳԶԲ-ը, որն ուղղված է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը՝ համաչափ ծախսային ֆոնի վրա հավասար արդյունքի հասնելու նպատակով: Այս մոտեցումը ոչ միայն նպաստում է գենդերային հավասարությանը, այլև հանդիսանում է համայնքային զարգացման գործիք:

Սույն ուղեցույցը ներկայացնում է բյուջետավարման իրականացման հստակ և մատչելի քայլեր, որոնց միջոցով հնարավոր է հասնել ցանկալի արդյունքի: Այն ուղղված է մեր իրականության մեջ առկա բացերի լրացմանը՝ հնարավորություն տալով տարբեր հարթակներում ներդնել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանն ուղղված բյուջետավարման գործընթացը, որն այսօր առավել քան երբևէ պահանջված է:

ՀՀ-ՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանում գենդերազգայուն բյուջետավարման (ԳԶԲ) իրավական հիմքերը ձևավորվել են աստիճանաբար՝ միջազգային պարտավորությունների, ազգային օրենսդրության և ռազմավարական մոտեցումների փոխկապակցմամբ: Այս գործընթացը չի սահմանափակվում միայն իրավական ակտերի թվարկմամբ, այլ արտացոլում է պետության քաղաքական կամքը գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:

Հայաստանը, որպես միջազգային հանրության անդամ, ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնք ուղղակիորեն ազդում են բյուջետային գործընթացների գենդերազգայուն դարձնելու վրա: Մասնավորապես՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և Պեկինի հռչակագրի շրջանակներում պետությունը պարտավորվել է վերացնել կանանց նկատմամբ խտրականությունը և ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ ֆինանսական պլանավորումը: Այս հարցին անդրադառնում են նաև տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերող միջազգային և եվրոպական փաստաթղթերը: Այս պարտավորությունները հիմք են ստեղծել, որպեսզի բյուջետային քաղաքականությունը դիտարկվի ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական արդարության տեսանկյունից:

- **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (CEDAW, 1979 թ.)** – ընդգծում է կանանց մասնակցության խոչընդոտների վերացումը բյուջետային գործընթացներում:
- **Պեկինի հռչակագիր (1995 թ.)** – կոչ է անում գենդերային ուղղորդմանը բյուջետային որոշումներում:
- **Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա (2006 թ.)** – խրախուսում է գենդերային ուղղորդումը և բյուջետավորում տեղական կառավարման մակարդակում:
- **Ադիս Աբեբայի գործողությունների օրակարգ (2015 թ.)** – ընդգծում է ԳՀԲ-ի և վերահսկողության անհրաժեշտությունը:
- **Կայուն զարգացման օրակարգ (2015 թ.)** – պարտավորություն՝ ավելացնել ներդրումները գենդերային հավասարության ուղղությամբ:
- **Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության Եվրոպական խարտիան,** որն ընդունվել է Եվրոպական քաղաքապետարանների և շրջանների խորհրդի կողմից՝«կոնկրետ գործողություններ է ձեռնարկել՝ ի նպաստ կանանց և տղամարդկանց հավասարության»,
- **Փարիզի տեղական և տարածքային կառավարությունների գլոբալ օրակարգը տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության համար,** ինչպես նաև
- **Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը** տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ, որը պահանջում է՝ Մասնակից պետություններն ապահովեն «միջոցներ՝ բավարարելու այն անձանց, որոնք հանդիպել են մասնակցելու որոշակի խոչընդոտների»: (Հոդված 1.2.ii.c)

ՀՀ օրենսդրությունը ևս արձագանքել է միջազգային այս ազդակներին:

ՀՀ Սահմանադրությունը հստակ ամրագրում է խտրականության արգելքը և իրավահավասարության սկզբունքը՝ ստեղծելով իրավական միջավայր, որտեղ գենդերային հավասարության ապահովումը դառնում է ոչ միայն քաղաքական, այլև իրավական պահանջ:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, իր հերթին, սահմանում է խտրականության ձևերը և պարտավորեցնում է պետական մարմիններին՝ մշակել և իրականացնել գենդերազգայուն քաղաքականություններ:

Թեև **«ՀՀ բյուջետային համակարգի մասին»** օրենքում ԳԶԲ-ն ուղղակիորեն չի նշվում, այն, այնուամենայնիվ, ներառում է այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են թափանցիկությունը, հաշվետվողականությունը և մասնակցային մոտեցումը, որոնք հնարավորություն են տալիս գենդերային ուղղորդման: Այսպիսով, իրավական դաշտը, թեև ոչ ամբողջությամբ հստակեցված, այդուհանդերձ բաց է գենդերազգայուն մեթոդաբանության կիրառման համար:

ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանն ապահովելուն ուղղված մի շարք դրույթներ է սահմանում, որոնք լայն հնարավորություններ են ընձեռում տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովելու համայնքի բնակիչների մասնակցությունը նաև տեղական բյուջեի կառավարմանը: Այս դրույթն անմիջականորեն կապված է գենդերազգայուն բյուջետավորման գործընթացի և սկզբունքների հետ:

ՀՀ-ում գենդերային հավասարության կայացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերն առավել մասնավորեցնում են այս ոլորտում պետության հանձնառությունը: Դրանք ոչ միայն ճանաչում են գենդերային անհավասարության առկայությունը, այլև առաջարկում են գործնական քայլեր՝ այդ անհավասարությունը հաղթահարելու համար, այդ թվում՝ բյուջետային գործընթացներում գենդերային վերլուծության և պլանավորման մեխանիզմների ներդրում:

ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ռազմավարություն և Միջնաժամկետ ծախսերի շրջանակը (ՄԾՇ) մատնանշող ռազմավարական փաստաթղթերը, որտեղ ԳՁԲ-ն դիտարկվում է որպես գործիք՝ գենդերային հավասարության նպատակների իրականացման համար:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի իրավական և քաղաքական միջավայրը ձևավորում է այնպիսի հենք, որտեղ գենդերազգայուն բյուջետավարումը կարող է զարգանալ որպես հանրային ֆինանսների կառավարման արդիական և սոցիալականորեն պատասխանատու մոտեցում:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Գենդերազգայուն բյուջե» տերմինը նշանակում է բյուջե, որը հավասարապես և արդարացիորեն հաշվի է առնում կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների շահերն ու կարիքները:

Բյուջետային գործընթացներում գենդերային մոտեցումը որոշակի ժամանակահատվածի, հասարակարգի, կառավարման տարբեր համակարգերում կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունների առանձնահատկությունների դիտարկումն է, որով ամրագրվում է՝ տղամարդիկ և կանայք պետք է լինեն գործընթացի լիարժեք մասնակիցներ և շահառուներ:

«Գենդերազգայուն բյուջետավարումը» ծախսերի վերաբաշխման հնարավորություն է՝ ի նպաստ գենդերային հավասարության ապահովման: Այս գործընթացը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց տարբեր կարիքներն ու առաջնահերթությունները, խնդիրներն ու պահանջները: ԳԶԲՆ սկսվում է տղամարդկանց և կանանց վրա բյուջեի ազդեցության վերլուծությունով, որի արդյունքներն այնուհետև ներառվում են բյուջեի մշակման մեջ:

Գենդերազգայուն բյուջեի մասին սխալ պատկերացումներից խուսափելու համար հարկ է նշել, որ այն կանանց համար առանձին բյուջե չէ. բյուջեի միջոցների բաշխման վերլուծության փորձ է, որտեղ հաշվի են առնվում գենդերային առանձնահատկությունները:

ԳԶԲ նպատակ ունի կառավարել և գնահատել որոշումներն ու նրանցից բխող հետևանքները կանանց և տղամարդկանց համար:

ԳԶԲ–ն սոցիալական վերափոխման և անհավասարության վերացման հզոր գործիք է: Այն ունի փուլեր՝նախ բյուջեի գենդերային տարբերակված ազդեցությունների վերլուծություն, այնուհետև՝ բյուջետային որոշումների կայացում ու կանանց և տղամարդկանց տարբերակվող պահանջներին համապատասխան առաջնահերթությունների որոշում, վերջում՝ իրականացում և ազդեցության մշտադիտարկում:

Գենդերազգայուն բյուջետավարումը օգնում է երկրներին.

- Իրականացնել իրենց միջազգային պարտավորությունները:
- Բյուջեները դարձնել ավելի ուժեղ գործիք գենդերային հավասարության վերաբերյալ քաղաքականության իրականացման և հասարակության մեջ խտրականության վերացման համար:
- Բարձրացնել պլանավորողների և քաղաքականություն մշակողների իրազեկվածությունն ու գիտակցությունն այն մասին, թե ինչպես են բյուջեները և քաղաքականությունները տարբերակված ձևով ազդում կանանց և տղամարդկանց վրա:
- Խթանել ավելի մեծ պատասխանատվություն պետական ռեսուրսների օգտագործման համար:
- Արդյունավետ օգտագործել պետական ռեսուրսները, քանզի գենդերային անհավասարությունը կարող է հանգեցնել տնտեսական և մարդկային զարգացման մեծ կորուստների:
- Ապահովել թափանցիկություն՝ բյուջեն բոլորի համար ավելի հասկանալի դարձնելով և խրախուսելով հասարակության ավելի մեծ մասնակցությունը:
- Ապահովել բյուջեի իրականացման մշտադիտարկումը:

Գենդերազգայուն բյուջետավարումը և ծրագրային բյուջեի առավելությունները. Հայաստանում բյուջետային գործընթացները երկար ժամանակ հիմնված են եղել ծախսերի կառավարման վրա՝ առանց ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպման: Այս մոտեցումը սահմանափակել է հանրային միջոցների արդյունավետ օգտագործման հնարավորությունները՝ չապահովելով բավարար թափանցիկություն այն մասին, թե ինչ ծառայություններ են մատուցվել և ինչ ազդեցություն են ունեցել:

Հանրային ֆինանսների կառավարման բարելավման նպատակով, որպես քաղաքական բարեփոխում, ներդրվել է ծրագրային բյուջետավորումը (ԾԲ)՝ ուղղված բյուջետային հատկացումների կապակցմանը կոնկրետ քաղաքական ծրագրերի և դրանց ակնկալվող արդյունքների հետ: Այս համակարգը հնարավորություն է տալիս նաև գենդերազգայուն բյուջետավարման ինտեգրմանը՝ սեռով պայմանավորված ծախսերը փոխկապակցելով ծրագրային նպատակների և արդյունքների հետ: Ավելին, այսօր մեծ տարածում ստացած մասնակցային բյուջետավարման գործընթացը հնարավորություն է ընձեռում համայնքային բյուջեի գենդերային ուղղորդման՝ բացահայտելով առկա խնդիրները, առաջարկելով լուծումներ՝ ապահովելով հավասար մասնակցություն ու արդյունք թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար:

ԾԲ համակարգը հնարավորություն է տալիս հավաքել տվյալներ կանանց և տղամարդկանց ուղղված ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև՝ կիրառել գենդերային ցուցանիշներ՝ բյուջեի կատարման մշտադիտարկման և գնահատման համար: Սա ձևավորում է տվյալների ամբողջական բազա՝ հիմնավորված քաղաքականությունների մշակման և դոնորային հաղորդակցության համար:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ. ՓՈՒԼԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գենդերազգայուն բյուջետավարումը կարելի է իրականացնել բյուջետավարման տարբեր փուլերում[1].

ՆԱԽԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ (EX ANTE) ՓՈՒԼ

Գենդերային ազդեցության նախնական գնահատում. Առանձին բյուջետային միջոցառումների գնահատում՝ մինչև դրանց ներառումը բյուջե՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային հավասարության վրա ունեցած ազդեցությանը:

Բյուջեի ելակետային վերլուծություն. Պարբերաբար իրականացվող վերլուծություն՝ գնահատելու, թե ինչպես են պետական ծախսերի և եկամուտների առկա բաշխումները նպաստում (կամ չեն նպաստում) գենդերային հավասարությանը:

Գենդերային կարիքների գնահատում. Որակական գնահատում՝ ներառելով շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքներն ու դիտարկումները՝ պարզելու, թե որքանով են պետական քաղաքականություններն ու ծրագրերը բավարարում գենդերային հավասարության կարիքները՝ բյուջետային քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու նպատակով:

ԸՆԹԱՑԻԿ ՓՈՒԼ

Գենդերազգայուն մոտեցում՝ արդյունքների սահմանման մեջ. Պահանջներ, ըստ որոնց՝ բյուջեի հետ կապված կատարողականի նվազագույն չափաբաժինը պետք է կապվի գենդերային զգայուն քաղաքականությունների հետ:

Գենդերազգայուն մոտեցում՝ ռեսուրսների բաշխման մեջ. Պահանջներ, ըստ որոնց՝ ընդհանուր բյուջետային ռեսուրսների նվազագույն չափաբաժինը պետք է ուղղվի գենդերային զգայուն քաղաքականություններին:

1 Adapted from Gender budgeting in OECD countries, OECD Journal on Budgeting, Volume 2016/3, OECD 2017

Գենդերային ազդեցության վերլուծություն բյուջեի մակարդակում. Տարեկան բյուջեին կցվում է պաշտոնական գնահատում՝ իրականացված կենտրոնական բյուջետային մարմնի կողմից (կամ նրա լիազորությամբ), որը գնահատում է բյուջեի ընդհանուր ազդեցությունը գենդերային հավասարության խթանման վրա՝ ներառելով գենդերային տարանջատված վերլուծություն կոնկրետ քաղաքական միջոցառումների (և՛ եկամուտների, և՛ ծախսերի) վերաբերյալ:

ՀԵՏԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ (EX POST) ՓՈՒԼ

Փաստացի գենդերային ազդեցության գնահատում. Առանձին բյուջետային միջոցառումների գնահատում՝ դրանց ներդրումից կամ իրականացումից հետո՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային հավասարության վրա ունեցած ազդեցությանը:

Բյուջեի գենդերային աուդիտ. Անկախ և օբյեկտիվ վերլուծություն՝ իրականացված համապատասխան մարմնի կողմից, որը տարբերվում է կենտրոնական բյուջետային մարմնից՝ գնահատելու, թե որքանով է գենդերային հավասարությունն արդյունավետորեն խթանվում և/կամ ապահովվում տարեկան բյուջեում սահմանված քաղաքականությունների միջոցով:

Գենդերազգայուն մոտեցում ծախսերի վերանայման մեջ. Ազգային կամ «համապարփակ» ծախսերի վերանայման համատեքստում գենդերը մշտապես ներառվում է որպես առանձին վերլուծական չափում:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ 5 ՔԱՅԼԸ

Գենդերազգայուն բյուջետավարման ցանկացած փուլում կիրառվում է նույն 5 քայլով մոտեցումը[2].

2 Աղբյուրը. «Գենդերազգայուն բյուջետավարում. Բյուջետային ծրագրերի վերլուծությունը գենդերային տեսանկյունից», «ՄԱԿԿԱՆԱՅՔ», 2017 թ.:

Քայլ 1. Գենդերային իրավիճակի վերլուծություն

Նպատակ. Ապահովել որոշակի ոլորտում կանանց և տղամարդկանց համեմատական իրավիճակը ցույց տվող ապացույցներ՝ հիմնվելով սեռի սկզբունքով տարանջատված տվյալների վրա:

Կարևորություն.

1. Բացահայտել և ավելի լավ արձագանքել հետաքրքրող ոլորտում տղամարդկանց և կանանց տարբեր կարիքներին, հետաքրքրություններին և առաջնահերթություններին:
2. Հաշվի առնել, թե ինչպես է սեռի հիմքով խտրականությունը հատվում խտրականության մյուս հիմքերի հետ՝ ռասա, էթնիկ պատկանելիություն, տարիք, գյուղական/քաղաքային բնակություն և այլն:

Արդյունք. Սեռով տարանջատված տվյալների հիման վրա իրավիճակի վերլուծության հաշվետվություն՝ կոնկրետ ոլորտների գենդերային բացերի և անհավասարությունների բացահայտմամբ:

Քայլ 2. Գենդերային ազդեցության գնահատում

Նպատակ. Գնահատել, թե արդյոք հնարավոր է որոշակի քաղաքականության կամ ծրագրի միջոցով նպաստել Քայլ 1ում նկարագրված գենդերային իրավիճակի բարելավմանը:

Կարևորություն.

1. Առանձնացնել գենդերային բացերը և բացահայտել հնարավոր կարգավորումը գենդերային և ոլորտին հատուկ քաղաքականությամբ:
2. Հստակեցնել իրավիճակի հաղթահարման մոտեցումները:
3. Առաջարկել փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքականության/ծրագրի կողմից վերոնշյալ վերլուծության հիման վրա:

Արդյունք. Գնահատման զեկույց առ այն, թե արդյոք որոշակի քաղաքականություն կամ ծրագիր կարող է նպաստել իրավիճակի շտկմանը կամ հանգեցնել գենդերային անհավասարությունների աճին:

Քայլ 3. Բյուջետային հատկացումների համարժեքության գնահատում

Նպատակ. Պարզել, թե արդյոք բյուջետային հատկացումները բավարար և համապատասխան են նախատեսված գենդերային քաղաքականության իրականացման համար:

Կարևորություն. Հնարավորություն է տալիս կենտրոնանալ բյուջեի վրա և վերլուծել այն:

Արդյունք. Բյուջետային գնահատում, որը ցույց է տալիս, թե արդյոք բյուջետային հատկացումները համապատասխան են նախատեսված գենդերային քաղաքականությունն իրականացնելու համար:

Քայլ 4. Ծախսի և ծառայության մոնիտորինգ (ինչպե՞ս, ե՞րբ, ու՞մ միջոցով)

Նպատակ. Վերահսկել ծախսերը՝ բյուջեի գենդերային վերլուծության համար տարբեր տիպի, նախընտրելի է՝ սեռի սկզբունքով տարանջատված տվյալներ ձեռք բերելու միջոցով:

Գործընթաց.

1. Ներդրումների չափում (օրինակ՝ վերլուծության ենթակա ծրագրի համար բյուջետավարված գումարի չափը կամ նախատեսված անձնակազմը):
2. Արդյունքների չափում. վերլուծության ենթակա ծրագրի ուղղակի արտադրանքը (օրինակ՝ բժշկական ծառայություն ստացող շահառուների քանակը կամ կառուցված բուժհաստատությունների քանակը):
3. Վերջնարդյունքի չափում. վերլուծության ենթակա քաղաքականության կամ ծրագրի արդյունքները (օրինակ՝ առողջության, կրթության մակարդակի բարելավում և ժամանակի առկայություն):
4. Արդյունքային ցուցիչների ստուգում:

Քայլ 5. Վերջնարդյունքի գնահատում

Նպատակ. Գնահատել քաղաքականությունը կամ ծրագիրը իր վերջնարդյունքների հիման վրա:

Կարևորություն. Հնարավորություն է տալիս հասկանալ ներդրում-վերջնարդյունք կապը:

Արդյունք. Քաղաքականության կամ ծրագրի զեկույց:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Բյուջետային համակարգը սահմանված և հաստատված է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով, որով կարգավորվում են երկրում բյուջետային գործընթացները: Այս օրենքն ընդունվել է 1997 թվականին և ընդարձակ փոփոխության է ենթարկվել հետագայում:

Պետական ոլորտի բարեփոխումների ընթացքում երկրի բյուջետային համակարգը վերակազմավորվել է, և համայնքային բյուջեները դարձել են Հայաստանի Հանրապետության ֆինանսական և, մասնավորապես, բյուջետային համակարգի անբաժանելի բաղադրիչները:

Բյուջետային համակարգը կարևոր դեր է խաղում երկրի ֆինանսական միասնական համակարգում:

Հայաստանի բյուջետային համակարգը ներառում է.

Պետական բյուջե՝ որպես առաջին մակարդակ

Կառավարությունը պատասխանատու է պետական բյուջեի նախագծի ձևավորման համար:

Համայնքների բյուջե՝ որպես երկրորդ մակարդակ

Համայնքների ղեկավարները պատասխանատու են համայնքի բյուջեի նախագծի ձևավորման համար:

Բյուջեի նախագիծը կազմվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության, միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ինչպես նաև՝ համայնքների զարգացման ծրագրերի:

Պետական բյուջեն և համայնքների բյուջեն կազմում են Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն, որի եկամուտներն ու ծախսերն արտացոլում են կազմող բաղադրիչների համախառն մուտքերն ու արտահոսքերը:

ԵՐԿՈՒ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ (ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ) ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԵՆ, որոնց արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը դրանց փոխհարաբերությունների հստակ կարգավորումն է: «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է բյուջետային հարաբերությունների կարգավորումը որպես իրավասու լիազորությունների սահմաններում պատշաճ կերպով լիազորված կառույցների գործունեություն՝ բյուջետային համակարգի կառուցվածքը, դրա կառուցվածքը սահմանելը, բյուջեների միջև եկամուտների բաշխումը, բյուջեների կատարման, հաշվետվությունների ներկայացման և վերահսկման վերաբերյալ բյուջեի գործընթացները, բյուջեի ապահովումը, դասակարգման համակարգը, բյուջեներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելը:

Պետության և համայնքների բյուջեների միջև փոխհարաբերությունների կարգավորման կարևոր դերը պատկանում է պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրվող հատկացումները, որոնք դասակարգվում են բաշխման նպատակներով առանձնացված հետևյալ խմբերի.

- Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ, որոնք համայնքների բյուջեներին հատկացվել են ֆինանսական հավասարեցման սկզբունքով՝ կրկնվող ծախսերը հոգալու համար: Այս հատկացումները կարող են ծախսվել ցանկացած ուղղությամբ (դրանք հայեցողական են):
- Այլ սուբսիդիաներ, որոնք հատկացվել են համայնքների բյուջեների ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու համար. դրանք կապված չեն համայնքի բյուջեի որևէ ծրագրի հետ:

- Սուբվենցիաներ հատկացվում են համայնքներում նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար:
- Համայնքների բյուջեները կարող են նաև ստանալ բյուջետային վարկեր և փոխառություններ: Բյուջետային վարկերը հատկացվում են համայնքի բյուջեի եկամուտների ժամանակավոր պակասը ծածկելու և, այդպիսով, դրանց վարչական բաղադրիչի համապատասխան ծախսերը ֆինանսավորելու համար: Բյուջետային փոխառություններն այն ռեսուրսներն են, որոնք անհրաժեշտ են համայնքներում ենթակառուցվածքների զարգացման գործում ներդրումներ կատարելու համար, որոնք ներգրավվում են պայմանագրային հիմունքներով կամ համայնքային պարտատոմսերի թողարկումով:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Տվյալ ֆինանսական տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է նախորդ տարվա հուլիս ամսին և ավարտվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատմամբ: Համայնքի ղեկավարն աշխատակազմի աջակցությամբ նախագծում է տեղական բյուջեն՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում սահմանված տարեկան խնդիրների հիման վրա: Ցավոք, տեղական բյուջեի գործընթացը միշտ չէ, որ համապատասխանում է տվյալ ժամանակացույցին՝ համայնքներին տրվող դոտացիաների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ուշացումների պատճառով:

Համայնքային բյուջեի պլանավորումը սկսում է համայքի ղեկավարի որոշումով և ավարտվում համայնքի ավագանու կողմից բյուջեի հաստատմամբ: Այս փուլի կարևոր խնդիրներն են՝ ժամանակացույցի պատրաստումը, աշխատակազմի բաժինների միջև պատասխանատվությունների բաշխումը, մեթոդաբանական նյութերի նախապատրաստումը, բյուջետային եկամուտների և ծախսերի պլանավորումն ու բաշխումը, ժողովների և քննարկումների կազմակերպումը, հանրային լսումները և այլն:

Պաշտոնական ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում դեկտեմբերի 31-ին: Որպես կանոն՝ համայնքային բյուջեները կազմվում են մեկ տարով:

Օրենսդրությունը հնարավորություն է տալիս ծրագրային բյուջեի կազմման գործընթաց իրականացնել նաև համայնքային մակարդակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Վարչապետի Ն36-Ա որոշմամբ https://www.irtek.am/views/act.aspx?aid=128193 սահմանվում է 2026-2028 թվականների բյուջետային գործընթացի ժամանակացույցը:

Ընդհանուր առմամբ, այն տևում է մոտ 2 տարի, այսինքն՝ օրինակ 2024 թ-ի համար սկսվել է 2023 թ. հունվար ամսից և իր մեջ ներառել է և՛ ՄԺԾԾ-ի, և՛ պետական բյուջեի կազմման ամբողջ գործընթացը՝ նախաապատրաստական աշխատանքներից մինչև բուն մշակում, քննարկում, հաստատում և այլն: Այդ ժամանակացույցում պետական բյուջեի մշակման աշխատանքները սկսվում են մոտավորապես հունիս ամսին: Իսկ բյուջեն հաստատվում է հիմնականում դեկտեմբեր ամսին:

Ինչ վերաբերում է համայնքների բյուջեներին, ապա վերոնշյալ գործընթացում համայնքների բյուջեների կազմման համար տվյալ ժամանակացույցում նշվում են միայն մեթոդական ուղեցույցների և ցուցումների, ֆինանսական համահարթեցման և սուբվենցիաների հաշվարկման մասին: Համայնքների բյուջեների հաստատումը հիմնականում դեկտեմբեր ամսին է լինում: Համայնքի բյուջեում փոփոխությունները կատարվում են միայն ավագանու որոշմամբ, և դա պետական մարմինների կողմից ենթակա չէ հաստատման կամ քննարկման:

Պետական մարմինների կողմից ենթակա են քննարկման, հաստատման և հսկողության միայն այն միջոցները, որոնք տրամադրվել են պետական բյուջեից համայնքների բյուջեներին, սուբվենցիաների (նպատակային ծրագրեր իրականացնելու համար) կամ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման համար:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 33, մաս 4***

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ սույն օրենքի համաձայն:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 31, մաս 1***

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 32, մաս 1.8***

Համայնքի ղեկավարը համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և կառավարության հաստատած պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակումից հետո՝ մեկամսյա ժամկետում, ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: Հաստատումից հետո՝ եռօրյա ժամկետում, այն հրապարակվում է համայնքի պաշտոնական կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 32, մաս 1***

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 33, մաս 6, 7***

Համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը:

Պետական բյուջեի հաստատումից հետո համայնքների մինչ այդ հաստատված բյուջեներում երկշաբաթյա ժամկետում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով սույն օրենքով սահմանված բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը:

Բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

- ***«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 35, մաս 1, 10***

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

- ***«Տեղական ինքնակառավարմանը մասին» ՀՀ օրենք, Հոդված 92, մաս 3***

Համայնքի հաստատված բյուջեն, ինչպես նաև բյուջեում կատարված փոփոխությունները մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում են համայնքի բյուջեն սպասարկող պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, որը պարտավոր է համայնքի պահանջով անհապաղ կատարել համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումը, եթե դրանք առկա են տվյալ համայնքի բյուջեի հաշվում, նախատեսված են համայնքի բյուջեով, և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին համայնքի պահանջը պետական լիազորված մարմին ներկայացված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը կազմում է բյուջեի նախագիծը: Նա հանձնում է համայնքային տարեկան բյուջեի նախագիծն ավագանուն քննարկման համար՝ ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքի հիման վրա համայնքներին տրամադրվող սուբսիդիաների վերաբերյալ նախնական տվյալների հրապարակումից հետո՝ երկու ամսվա ժամկետում: Մինչև տարեկան բյուջեի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների ու առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

Համայնքի ավագանին. Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին: Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատել բյուջեն[3]:

3 «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 32:

Համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ) և համայնքային կազմակերպությունների մասնակցությունը բյուջետային գործընթացում կարգավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և կարևոր է մասնակցային ու գենդերազգայուն բյուջետավարման գործընթացներում: Երկու դեպքերում էլ անհրաժեշտ է լսել բնակչության և իր շահերը ներկայացնող՝ հասարակական և համայնքահեն կազմակերպությունների կարծիքները, կարիքները, առաջարկությունները և լուծումները:
Ի դեպ, այս հատվածի ներկայացուցիչների մասնակցությունը կարևոր է բյուջետավարման բոլոր փուլերում՝ ձևակերպման փուլից մինչ մշտադիտարկման և գնահատման փուլը:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կիրառելի ձևերը ներկայացված են ստորև.

Մասնակցության ձևը	Տեղեկացնել	Կրթել	Տեղեկություններ հայցել	Խորհրդակցել	Ղեկավարել	Հեռարձակ կապ ապահովել	Ուղղակի ներգրավել
Տեղեկացման (իրազեկման) և կրթության ձևեր							
Հանրային տեղեկատվություն							
Համայնքային ընդունելություններ							
Կրթական ծրագրեր							
Հայտարարություններ տեղական ԶԼՄ-ներով							
Ընդունելություններ և «բաց դռների» ծրագրեր							

Մասնակցության ձևը	Տեղեկացնել	Կոթել	Տեղեկություններ փոխանցել	Խորհրդակցել	Ղեկավարել	Հետադարձ կապի մեխանիզմ	Ընտրվելու վիճակում
Ներգրավման և ներգործության ձևեր							
Հանրային լսումներ և (կամ) քննարկումներ							
Հանրային ժողովներ, հանդիպումներ							
Հարցումներ							
Ֆոկուս խմբեր							
Խորհրդակցական մարմիններ							
Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր							
ՏԻՄ-երին հանրագրի ներկայացման՝ բնակիչների նախաձեռնություն							
Տեղական ԶԼՄ-ների հետ ուղիղ կապեր							
Էլեկտրոնային և համացանցային միջոցներ							

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՑԻԿԼԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Գենդերազգայուն բյուջետավարման իրականացումը տեղական մակարդակում հնարավոր է իրականացնել հետևյալ կերպ[4].

ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼ

Սահմանում. Համայնքի ղեկավարի կողմից մշակվում է բյուջետային օրացույցը ՝ համայնքի զարգացման ծրագրով և տարեկան աշխատանքային պլանով նախատեսվող ծրագրերի իրականացման առաջնահերթություններին համապատասխան: **ԳՁԲ հնարավորություն**. ԳՁԲ ունենալու համար համայնքային բյուջեն պետք է հիմնված լինի գենդերային վերլուծության վրա, պարունակի սեռով տարանջատված տվյալներ ու մոտեցումներ և արտացոլի կանանց ու տղամարդկանց, աղջիկների ու տղաների կարիքները և շահերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Սահմանում. Բյուջեն ներկայացվում է ավագանուն՝ քննարկման, լրամշակման և հաստատման համար: **ԳՁԲ հնարավորություն.** Ենթադրվում է տեղական մակարդակում աշխատանք ավագանու և բնակչության, ինչպես նաև՝ տեղական լրատվամիջոցների հետ:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

Սահմանում. Հաստատված բյուջեն օգտագործվում է իրականացնելու նախատեսված ծրագրերն ու միջոցառումները, իսկ ծախսերը և ակնկալվելիք արդյունքները պարբերաբար մշտադիտարկվում են: **ԳՁԲ հնարավորություն**. Այս փուլում օգտակար է սեռով տարանջատված տվյալների հավաքագրումը՝ մշտադիտարկելու գնումները, ծախսերը, ելքերը և արդյունքները. օրինակ՝ գնումների մշտադիտարկման, հանրային ծախսերին հետևող ուսումնասիրության, սոցիալական աուդիտների և քաղաքացիների զեկույցային քարտերի (համայնքային

4 Աղբյուր. Շարփ, Ռ. (2003), Բյուջետավարում հավասարության և արդարության համար. գենդերային բյուջետային նախաձեռնություններ կատարողականության վրա հիմնված բյուջետավարման շրջանակներում:

մշտադիտարկում) միջոցով:

ԱՈՒԴԻՏԻ/ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Սահմանում. Բյուջեն և ծրագրային արդյունքները գնահատվում են՝ ապահովելու հանրային ռեսուրսների արդյունավետ, հավասար և արդարացի օգտագործումը: **ԳՁԲ հնարավորություն.** Այս փուլում ենթադրվում են գենդերային զգայունության բարձրացում աուդիտի պաշտոնյաների շրջանում, ինչպես նաև՝ գենդերային աուդիտի կամ գենդերային ցուցիչի ներկայացում: Գենդերային աուդիտները հակված են լինել ավելի կայուն, երբ նրանք իրականացվում են որպես կառավարության կանոնավոր աուդիտորական գործընթացի մաս:

ԳՁԲ-Ի ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Համայնքի մակարդակում գենդերազգայուն բյուջետավարում իրականացնելու համար անհրաժեշտ է իրականացնել ԳՁԲ 5 քայլը:

Քայլ 1. Համայնքի գենդերային վերլուծություն

Այն ենթադրում է հետևյալ գործողությունները.

1. **Վիճակագրական տվյալների** հավաքագրում և վերլուծություն,
2. **Իրավիճակի վերլուծություն** - ոլորտային գենդերային հիմնախնդիրների բացահայտում,
3. **Համայնքի գործող բյուջեի գենդերային վերլուծություն**:

Վիճակագրական տվյալների (1) հավաքագրում բաղադրիչը իրականացնելու համար անհրաժեշտ է նախապատրաստել համայնքի բնակչությանը վերաբերող հետևյալ տվյալները.

- Համայնքի փաստացի բնակչությունը՝ ըստ սեռի.
- Երեխաները՝ ըստ սեռի.
- Տարեցները՝ ըստ սեռի.
- Տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ ըստ սեռի.
- Զբաղված բնակչությունը՝ ըստ սեռի.
- Գործազուրկ երիտասարդների թիվը՝ ըստ սեռի.
- Գրանցված գործազուրկների թիվը՝ ըստ սեռի.
- Երկարաժամկետ գործազուրկների թիվը՝ ըստ սեռի.
- Կենսաթոշակառուների թիվը (այդ թվում՝ աշխատող կենսաթոշակառուների).
- Կենսաթոշակի չափերը՝ ըստ ստացողների սեռի.
- Գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվածների թիվը՝ ըստ սեռի.

- Տնային տնտեսությունների թիվը՝ ըստ գլխավորի սեռի.
- Մեկ շնչին ընկնող եկամուտները տնտեսություններում՝ ըստ գլխավորի սեռի.
- Աղքատության ցուցանիշները՝ ըստ տնային տնտեսությունների կին/տղամարդ գլխավորի.
- Կանանց և տղամարդկանց զբաղվածության մակարդակը՝ ըստ ոլորտների.
- Ներկայացնել համայնքում որոշումների կայացման մակարդակում կանանց և տղամարդկանց համասնությունը.
- Որպես առանձին կետ՝ հարկ կլինի ներկայացնել համայնքում գործող նախադպրոցական հաստատությունների թիվը, նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը, նախադպրոցական հաստատություններ չհաճախող (սակայն համապատասխան տարիք ունեցող) երեխաների թիվը:

Իրավիճակի վերլուծության (2) համար կարելի է օգտագործել «Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության Եվրոպական խարտիայի»[5] Ծառայությունների մատուցման կարևորության վերաբերյալ գլխի հոդվածների նկարագրությունը, որոնք հուշում են տարբեր ոլորտներին վերաբերող առանձնահատկությունները:

Հոդված	Համապատասխան պահանջը
Հոդված 13 Կրթություն և ուսուցում ամբողջ կյանքի ընթացքում	Ապահովել և խթանել կանանց ու տղամարդկանց, աղջիկների ու տղաների համար կրթության մատչելիություն և միջին մասնագիտական ու շարունակական ուսուցման հավասար հասանելիություն: Վերացնել կրթության բոլոր ձևերում կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ ցանկացած կարծրատիպային պատկերացում: Վերանայել դպրոցների և այլ կրթական ծրագրերի կրթական նյութերն ու դասավանդման մեթոդները՝ ապահովելու կարծրատիպային վերաբերմունքի և գործելակերպերի դեմ պայքար, ինչպես նաև՝ նպաստելու դպրոցի ղեկավարման և կառավարման բոլոր մակարդակներում կանանց ու տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանը:

5 https://ccre-cemr.org/wp-content/uploads/2024/03/Charter_2022_EN.pdf

Հոդված 14 Առողջապահություն	Նպաստել և ապահովել քաղաքացիների առողջության բարձրագույն մակարդակ՝ ներառելով գենդերային մոտեցում առողջապահական ու բժշկական ծառայությունների պլանավորման, միջոցների հայթայթման և մատուցման գործընթացներում: Ապահովել, որ առողջությունը խթանող գործողությունները, ներառյալ նրանք, որոնք քաջալերում են առողջ սննդակարգ և մարմնամարզության կարևորությունը, հաշվի առնեն կանանց ու տղամարդկանց տարբեր կարիքներն ու վերաբերմունքը: Ապահովել, որ առողջապահության աշխատակիցները, ներառյալ նրանք, ովքեր ներգրավված են առողջապահության խթանման աշխատանքներում, ճանաչեն բժշկության և առողջապահության վրա գենդերի ներգործության ձևերն ու եղանակները և հաշվի առնեն այդ բնագավառում կանանց ու տղամարդկանց տարբեր փորձառությունները: Ապահովել, որ կանանց ու տղամարդկանց հասանելի լինեն առողջապահական տեղեկություններ:
Հոդված 15 Սոցիալական աջակցություն և ծառայություններ	Ներառել գենդերային մոտեցում սոցիալական օգնության և սոցիալական ծառայությունների պլանավորման, ռեսուրսներով ապահովորման և մատուցման գործընթացներում: Ապահովել, որ նրանք, ովքեր ներգրավված են սոցիալական օգնության տրամադրման և սոցիալական ծառայությունների մատուցման գործում, ճանաչեն այդ ծառայությունների վրա գենդերի ներգործության ձևերն ու եղանակները և հաշվի առնեն այդ բնագավառում կանանց ու տղամարդկանց տարբեր փորձառությունները:
Հոդված 16 Երեխաների խնամք	Դասել երեխաների խնամքի տրամադրումն ու խթանումը, ուղղակիորեն կամ այլ խնամք տրամադրողների միջոցով, իր առաջնահերթությունների շարքում: Խրախուսել երեխայի նման խնամքի տրամադրումն այլոց կողմից, ներառյալ՝ երեխայի խնամքի տրամադրումը և օժանդակումը տեղական գործատուների կողմից: Դիմակայել այն գենդերային կարծրատիպին, ըստ որի՝ երեխայի խնամքը դիտվում է որպես հիմնականում կանանց խնդիր և պատասխանատվություն:

Հոդված 17 Այլ խնամառուների խնամքը	Դասել խնամառուների համար բարձրորակ, մատչելի խնամքի տրամադրումն ու խթանումը, ուղղակիորեն կամ այլ խնամք տրամադրողների միջոցով, իր առաջնահերթությունների շարքում: Տրամադրել օժանդակություն և խթանել հնարավորություններ նրանց համար, ովքեր իրենց խնամատար պարտականությունների հետևանքով տառապում են սոցիալական մեկուսացումից: Պայքարել ընդդեմ այն կարծրատիպի, որը ենթադրում է՝ խնամառուների մասին հոգ տանելը հիմնականում կանանց պատասխանատվությունն է:
Հոդված 18 Սոցիալական ներառականություն	Խթանել բոլոր նրանց համար, ովքեր ապրում են կամ ենթարկված են սոցիալական մեկուսացման կամ աղքատության պայմաններում ապրելու ռիսկին, զբաղվածության, բնակարանային ապահովման, ուսուցման, կրթության, մշակույթի, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և սոցիալական ու բժշկական օգնության արդյունավետ հասանելիություն: Հաշվի առնել սոցիալական մեկուսացման մեջ ապրող կանանց յուրահատուկ կարիքները և իրավիճակը: Նպաստել միգրանտ կանանց ու տղամարդկանց ինտեգրմանը՝ հաշվի առնելով նրանց կոնկրետ կարիքները:
Հոդված 19 Բնակարանային ապահովում	Տրամադրել բոլորի համար պատշաճ ապրելու միջավայր ու հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող համապատասխան չափի և ստանդարտի բնակարաններ կամ նպաստել նման բնակարանային ապահովմանը:
Հոդված 21 Ապահովություն և անվտանգություն	Գենդերային տեսանկյունից վերլուծել այն վիճակագրությունը, որը վերաբերում է կանանց ու տղամարդկանց անվտանգության կամ ապահովության վրա ներգործող դեպքերի ծավալին և տեսակներին (ներառյալ՝ անհատի դեմ ծանր հանցագործությունները), և, ըստ անհրաժեշտության չափել նաև նրանց վախի զգացողության մակարդակն ու բնույթը կամ անապահովության այլ աղբյուրները: Մշակել և իրականացնել ռազմավարություններ, քաղաքականություններ և գործողություններ, որոնք ներառում են տեղական միջավայրի (օրինակ՝ տրանսպորտային հանգույցներ, մեքենաների կայանատեղիներ, փողոցային լուսավորություն) վիճակի կամ դիզայնի, ոստիկանական և նման այլ ծառայությունների կոնկրետ բարելավումներ՝ նպաստելու կանանց ու տղամարդկանց գործնական անվտանգության և ապահովության ամրապնդմանը և դրականորեն ներգործելու նրանց անվտանգության ու ապահովության պակասի վերաբերյալ ընկալումների վրա:

Հոդված 22 Գենդերային բռնություն	Տրամադրել տուժածներին կոնկրետ օժանդակող կառույցներ կամ աջակցել գործող կառույցներին: Տրամադրել հանրային տեղեկատվություն տարածքում հասանելի օգնության վերաբերյալ: Ապահովել, որ մասնագիտական անձնակազմը ստանա համապատասխան ուսուցում՝ տուժածներին բացահայտելու և օժանդակելու հարցում: Ապահովել համապատասխան ծառայությունների (ինչպիսիք են՝ ոստիկանությունը, առողջապահական և բնակարանային ֆոնդի պաշտոնյաները) միջև արդյունավետ համակարգում: Խթանել իրազեկության բարձրացման քարոզարշավներ և կրթական ծրագրեր՝ նպատակաուղղված պոտենցիալ և/կամ փաստացի տուժածներին ու ոճրագործներին:
Հոդված 23 Մարդկանց թրաֆիքինգ	Նախաձեռնել և ուժեղացնել քաղաքականություններն ու գործողությունները՝ միտված մարդկանց թրաֆիքինգը կանխելուն, ներառյալ, ըստ անհրաժեշտության, հետևյալը. Տեղեկատվական և իրազեկության բարձրացման քարոզարշավներ. Ուսուցողական ծրագրեր պատասխանատու մասնագիտական անձնակազմի համար՝ տուժածների բացահայտման և օժանդակության վեհաբերյալ. Պահանջարկը նվազեցնելուն միտված միջոցառումներ. Տուժածներին օժանդակելու համապատասխան միջոցառումներ, ներառյալ՝ բուժօգնության, պատշաճ ու ապահով ապրելավայրի և թարգմանության հասանելիությունը:

Գենդերային իրավիճակի վերլուծություն քայլը ենթադրում է նաև Համայնքի գործող բյուջեի գենդերային վերլուծություն (3), որի արդյունքում աշխատանքային խմբի կողմից ձևավորվում են առաջարկություններ բյուջետային ծրագրերի բարելավման վերաբերյալ: Այդ առաջարկությունները հետագայում հաշվի են առնվում համայնքային բյուջեն կազմելիս այնպես, որ այն ավելի լավ արձագանքի տարբեր սեռերի և տարբեր սոցիալական խմբերի կարիքներին: Առաջարկությունները կարող են ներառել փոփոխություններ ինչպես որոշակի գործողություններում, այնպես էլ՝ ամբողջական ծրագրերում, նոր ծրագրերի նախաձեռնում և անգամ համայնքային բյուջեների միջոցների վերաբաշխում:

Ստորև ներկայացվում է Պեկինի գործողությունների ծրագրի հիման վրա ստեղծված իրավիճակի և բյուջեի գենդերային վերլուծության համար օգտագործվող ստուգաթերթիկի օրինակ.

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ	Հայտնաբերված խնդիրը	ԲՅՈՒՋԵԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ
Կանայք և աղքատությունը	• Աղքատության մակարդակից ցածր տնային տնտեսություններում ապրող կանանց և աղջիկների բարձր տոկոսը	Կմն բյուջեի հատկացումներ՝ իրավիճակը հաղթահարելու համար:
Կանանց կրթությունը և մասնագիտական պատրաստությունը	• Միջնակարգ կրթության ոլորտում աղջիկների ընդգրկվածության ցածր տոկոսը • Աղջիկների և տղաների անցողիկ նիշը տարրական դպրոցի ավարտական քննության ընթացքում • Մասնագիտական կրթություն ստացող կանանց տոկոսը	«Ոչ կանացի» ուղղություններում կանանց ներգրավվածությունը ավելացնելու համար գումար նախատեսվածէ: Հատկացվել է գումար սովորողների սննդի/ գիշերօթիկի համար:
Կանայք և առողջապահությունը	• Մայրական մահացության մակարդակը • Հղի կանանց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դեպք	Հատկացումներ. նախատեսվել է/ ֆինանսավորվել է որևէ հատուկ ծրագիր:
Բռնություն կանանց նկատմամբ	• Հաղորդված բռնաբարությունների թիվը / 1000 կին • Ընտանեկան բռնության դեպքերի քանակը / 1000 կին	Պետական ֆինանսավորում թեժ գծերի, ապաստարանների, համայնքային այլ ծառայությունների համար: Հատկացումներ դատական համակարգին: Ծառայություններ մատուցողների կարողությունների զարգացում:

Կանայք և զինված հակամարտությունները	• Պաշտպանությանը հատկացվող բյուջեի տոկոսը	Կամ հատկացում ՄԱԿ-ի ԱԽ 1325- բանաձևը կատարելու համար: Կոնֆլիկտներից տուժած տարածքներում կամ կանանց և աղջիկների համար առողջապահության և կրթության մատչելիությունն ապահովելու համար հատկացում:
Կանայք և տնտեսությունը	• Բոլոր մասնագետների և ղեկավարների կանանց տոկոսը • Ոչ ֆորմալ ոլորտի կին աշխատողների տոկոսը	Հատկացումներ սոցիալական ապահովագրությանը մայրության մասով; Դայակներ: Հատկացումներ աշխատանքային տեսչության, օմբուդսմենի համար:
Կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին	• Կին խորհրդարանականների տոկոսը, ավագանու կազմում կանանց տոկոսը • Քաղաքացիական ծառայության մեջ տնօրենի և ավելի բարձր պաշտոնում կանանց տոկոսը	Կամն հատկացումներ աջակցելու կանանց ներգրավվմանն ավագանուն և համայնքում ղեկավար այլ պաշտոններում:

Ստորև ներկայացված են ԳՁԲ օրինակներ՝ ըստ վերոնշյալ թեմատիկ ոլորտների:

ՁԲ օրինակ՝ «Կանանց կրթություն և մասնագիտական պատրաստություն» ուղղությամբ

Խնդրի նկարագրություն. ՀՀ սահմանամերձ համայնքներից մեկում նկատվում են հետևյալ գենդերային անհավասարությունները կրթության և մասնագիտական պատրաստության ոլորտում.

- **Ավագ դպրոցում աղջիկների ընդգրկվածության ցածր մակարդակ,** երբ շատերը որոշում են չշարունակել կրթությունը 9-րդ դասարանից հետո՝ ընտանեկան պարտականությունների կամ սոցիալական ճնշումների պատճառով:
- **Մասնագիտական կրթություն ստացող կանանց ցածր տոկոս,** հատկապես՝ «ոչ կանացի» ոլորտներում. օրինակ՝ գյուղատնտեսություն, ինժեներություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ:

ԳԶԲ միջամտության առաջարկ

1. **Բյուջետային հատկացումներ՝ աղջիկների կրթության շարունակականության ապահովման համար**

- Հատուկ կրթաթոշակային ծրագիր՝ 9-րդ դասարանից հետո կրթությունը շարունակող աղջիկների համար:
- Տեղական բյուջեից կամ դոնորների միջոցով ֆինանսավորում՝ դպրոցից դուրս մնալու վտանգ ունեցող աղջիկների համար մենթորական աջակցություն և կրթական խորհրդատվություն:

2. **Մասնագիտական կրթության ոլորտում կանանց ներգրավման խթանում**

- Տեղական բյուջեում նախատեսել գումար «ոչ կանացի» ոլորտներում մասնագիտական կրթություն ստացող կանանց համար. օրինակ՝ գյուղատնտեսական տեխնոլոգիաներ, ավտոմեխանիկա, ծրագրավորում:
- Համայնքային համագործակցություն մասնագիտական ուսումնական կենտրոնների հետ՝ կանանց համար անվճար կամ սուբսիդավորված դասընթացների կազմակերպման նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

- Աղջիկների ընդգրկվածության աճ ավագ դպրոցում և մասնագիտական կրթությունում:
- Կանանց ներգրավվածության աճ «ոչ կանացի» մասնագիտություններում:
- Սոցիալական նորմերի փոփոխություն կրթության և մասնագիտական ընտրության հարցում:

Քայլ 2. Գենդերային ազդեցության գնահատում

Այս քայլով համայնքը ձևավորում է առաջարկություններ բյուջետային ծրագրերի վերաբերյալ և գնահատում, թե արդյոք հնարավոր է տվյալ ծրագրի միջոցով նպաստել Քայլ 1ում նկարագրված գենդերային իրավիճակի բարելավմանը:
Տվյալ դեպքում քննության է ենթարկվում ծրագրի նախագիծը:

Ծրագիրը ստեղծելու համար անհրաժեշտ է.

1. Առանձնացնել գենդերային բացերը և բացահայտել հնարավոր կարգավորումը գենդերային և ոլորտին հատուկ նախաձեռնությամբ.
2. Հստակեցնել իրավիճակի հաղթահարման մոտեցումները.
3. Առաջարկել համապարփակ ծրագիր և գնահատել դրա գենդերային ազդեցությունը:

Ծրագրի նախապատրաստման և ազդեցության ստուգման համար կարելի է օգտագործել հետևյալ ստուգաթերթիկը.

Նպատակներ	ԱրդյոՀք ծրագրի նպատակներն արտահայտում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց կարիքները: ԱրդյոՀք ծրագրի նպատակները միտված են շտկելու գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը և հիմնված միջազգային ու ազգային փաստաթղթերի վրա:
Շահառուներ	ԱրդյոՀք պահպանվել է հավասարակշռությունը ծրագրի շահառու կանանց և տղամարդկանց միջև (բացառությամբ այն դեպքերի, երբ ծրագիրն ուղղված է միայն կանանց կամ միայն տղամարդկանց՝ որպես անհավասարությունը շտկող միջոց):
Խնդիրներ	ԱրդյոՀք ծրագրի խնդիրներն ուղղված են և՛ կանանց, և՛ տղամարդկանց կարիքների բավարարմանը:
Պլանավորված գործողություններ	ԱրդյոՀք ծրագրի գործողությունները ենթադրում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց մասնակցություն:
Ցուցիչներ	ԱրդյոՀք ծրագրի ցուցիչները մշակվել են չափելու ծրագրի արդյունքները և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար: ԱրդյոՀք ծրագրի ցուցիչները տարանջատված են ըստ սեռի:
Իրականացում	Ովքե՞ր են իրականացնելու ծրագիրը: ԱրդյոՀք ծրագիր իրականացնողները պատրաստ են կատարել գենդերային ուղղորդումը: ԱրդյոՀք կանայք և տղամարդիկ հավասարապես կմասնակցեն ծրագրի իրականացմանը:
Մշտադիտարկում և գնահատում	ԱրդյոՀք ծրագրի մշտադիտարկման և գնահատման բաղադրիչը հիմնված է գենդերային հավասարության սկզբունքների վրա: Ովքե՞ր են իրականացնելու մշտադիտարկումն ու գնահատումը:

Քայլ 3. Բյուջետային հատկացումների համարժեքության գնահատում

Հնարավորություն է տալիս կենտրոնանալ բյուջեի վրա
և վերլուծել այն:
Ի դեպ, գենդերային ազդեցությունը գնահատելու քայլի հիմքում
ընկած են 3 հիմնական հարց.

- Արդյո՞ք բյուջետային հատկացումները բավարար և համապատասխան են նախատեսված գենդերային քաղաքականության իրականացման համար:
- Արդյո՞ք բյուջեի կազմման ընթացքում ծախսերը պլանավորվել են կանանց և տղամարդկանց համար հավասար արդյունք ստանալու տեսանկյունից:

Հաջորդ հարցը վերաբերում է հնարավոր ռիսկերին, թե

- արդյո՞ք այս ծրագիրը կարող է նպաստել իրավիճակի շտկմանը կամ հանգեցնել գենդերային անհավասարությունների աճին:

Այս քայլի շրջանակներում նախատեսվում է.

- Իրականացնել բյուջետային լսումներ՝ գենդերային հարցերով.
- Ապահովել այդ լսումներին քաղաքացիական մասնակցություն՝ քաղաքացիական հասարակության կառույցների և բնակիչների միջոցով.
- Նախապատրաստել ԳՀԲ-ի հիմնավորումը՝ բյուջետային փաստաթղթերում:



Քայլ 4. Ծախսի և ծառայության մոնիտորինգ (ինչպե՞ս, ե՞րբ, ու՞մ միջոցով)

Այս քայլով նախատեսված է ստուգել և վերահսկել ծախսերը՝ հիմք ընդունելով ակնկալվող արդյունքը կանանց և տղամարդկանց համար:

Գործընթացը ենթադրում է.

1. Ներդրումների չափում (օրինակ՝ վերլուծության ենթակա ծրագրի համար բյուջետավարված գումարի չափը կամ նախատեսված անձնակազմը).
2. Արդյունքների չափում. վերլուծության ենթակա ծրագրի ուղղակի արդյունքը (օրինակ՝ բժշկական ծառայություն ստացող շահառուների քանակը կամ կառուցված բուժհաստատությունների քանակը).
3. Վերջնարդյունքի չափում. վերլուծության ենթակա ծրագրի արդյունքները (օրինակ՝ առողջության, կրթության մակարդակի բարելավում և ժամանակի առկայություն).
4. Արդյունքային գենդերային ցուցիչների սահմանում:

Համայնքային գենդերազգայուն բյուջեի կատարողականը չափող ցուցիչների մշակումը պահանջում է համատեղել ֆինանսական հաշվետվողականությունը գենդերային ազդեցության գնահատման հետ:

Ստորև ներկայացվում են քանակական և որակական ցուցիչների օրինակներ՝ հիմնված միջազգային և տեղական փորձի վրա:

- **Քանակական ցուցիչներ**

Այս ցուցիչները չափում են թվային արդյունքները, որոնք կարելի է հեշտությամբ համեմատել ժամանակի ընթացքում.

- Գենդերային բյուջետային հատկացումների մասնաբաժինը՝ ընդհանուր համայնքային բյուջեի մեջ (%).
- Կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունը համայնքային ծրագրերում՝ ըստ սեռի.
- Կանանց մասնակցությամբ իրականացված ծրագրերի քանակը՝ տարեկան կտրվածքով.
- Հասարակական լսումների և խորհրդակցությունների քանակը, որտեղ կանայք ներկայացված են ≥30%.

- Ծրագրային շահառուների սեռային բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի.
- ԳՁԲ վերապատրաստում անցած համայնքային աշխատակիցների թիվը,
- Գենդերային հավասարությանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման աճը՝ նախորդ տարվա համեմատ (%).

- **Որակական ցուցիչներ**

Այս ցուցիչները գնահատում են գործընթացների ազդեցության որակը.

- ԳՁԲ-ի ներառման մակարդակը համայնքային ռազմավարական փաստաթղթերում.
- Կանանց և տղամարդկանց կարիքների արտացոլումը բյուջետային ծրագրերում.
- Համայնքային բյուջեի մշակման և հաշվետվության գործընթացում կանանց մասնակցության ընկալումը.
- ԳՁԲ-ի վերաբերյալ համայնքային աշխատակիցների գիտելիքների և վերաբերմունքի փոփոխությունը.
- Համայնքային ծրագրերի գենդերային ազդեցության գնահատման արդյունքները.
- Հասարակական կազմակերպությունների գնահատականը համայնքի գենդերազգայուն քաղաքականության վերաբերյալ.
- Համայնքային ղեկավարության կողմից գենդերային հավասարության առաջնահերթ ճանաչումը:

Ցանկալի է ցուցիչների մշակման գործընթացումներգրավել շահագրգիռ կողմերին՝ ՔՀԿ-ներ, համայնքային խորհուրդներ, կանանց խմբեր:

Ցուցիչները կարող են խմբավորվել ըստ ոլորտների՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ծառայություններ, ենթակառուցվածքներ: Օրինակ.

Կրթություն

Քանակական ցուցիչներ

- Կրթական ծրագրերում ընդգրկված աղջիկների և տղաների թիվը՝ ըստ տարիքային խմբերի
- Կանանց և տղամարդկանց մասնակցությունը ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին
- Դպրոցներում գենդերային հավասարության վերաբերյալ միջոցառումների քանակը
- Սեռով տարանջատված դպրոցից դուրս մնացածների տոկոսը

Որակական ցուցիչներ

- Ուսումնական ծրագրերում գենդերային հավասարության թեմաների ներառման մակարդակը
- Աղջիկների և տղաների կրթական կարիքների արտացոլումը համայնքային կրթական բյուջեում
- Ուսուցիչների և ծնողների վերաբերմունքը գենդերային հավասարության հարցերին
- Կրթական միջավայրի անվտանգությունն ու ներառականությունը՝ ըստ սեռի ընկալումների

Առողջապահություն

Քանակական ցուցիչներ

- Առաջնային առողջապահական ծառայություններից օգտվող կանանց և տղամարդկանց թիվը
- Մայրական առողջությանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման մասնաբաժինը
- Սեռով տարանջատված պատվաստումների ընդգրկվածություն
- ԳՀԲ վերապատրաստում անցած բուժաշխատողների թիվը

Որակական ցուցիչներ

- Առողջապահական ծառայությունների հասանելիության ընկալումը՝ ըստ սեռի
- Կանանց առողջության կարիքների արտացոլումը համայնքային առողջապահական ծրագրերում
- Գենդերային զգայուն մոտեցումների կիրառումը բուժաշխատողների կողմից
- Հղի կանանց և նորածինների խնամքի որակի վերաբերյալ շահառուների գնահատականը

Սոցիալական ծառայություններ

Քանակական ցուցիչներ

- Սոցիալական օգնություն ստացած կանանց և տղամարդկանց թիվը
- Ընտանեկան բռնության ենթարկվածներին ուղղված ծառայությունների ֆինանսավորման չափը
- Սեռով տարանջատված շահառուների թիվը՝ ըստ ծառայության տեսակի
- Գենդերային թեմաներով սոցիալական աշխատողների վերապատրաստման քանակը

Որակական ցուցիչներ

- Սոցիալական ծառայությունների գենդերային զգայունության մակարդակը
- Կանանց և տղամարդկանց կարիքների արտացոլումը սոցիալական ծրագրերում
- Շահառուների գոհունակությունը՝ ըստ սեռի
- Սեռով պայմանավորված խոցելիության ընկալումը համայնքային մակարդակում

Ենթակառուցվածքներ

Քանակական ցուցիչներ

- Նոր կառուցված կամ վերանորոգված ենթակառուցվածքների թիվը, որոնք ապահովում են գենդերային հավասարություն (օրինակ՝ սանհանգույցներ, լուսավորություն)
- Կանանց և տղամարդկանց մասնակցությունը ենթակառուցվածքային նախագծերի քննարկումներին
- Հասանելիության բարելավման ծրագրերի ֆինանսավորման չափը՝ ըստ սեռային կարիքների

Որակական ցուցիչներ

- Ենթակառուցվածքների պլանավորման գործընթացում կանանց կարծիքի ներառման մակարդակը
- Կանանց և աղջիկների անվտանգության ընկալումը հանրային տարածքներում
- Տրանսպորտային և հանրային ծառայությունների գենդերային հարմարեցվածության գնահատում
- Համայնքային ղեկավարության վերաբերմունքը գենդերազգայուն ենթակառուցվածքների անհրաժեշտությանը

Քայլ 5. Վերջնարդյունքի գնահատում

Այս քայլի նպատակն է գնահատել քաղաքականությունը կամ ծրագիրը՝ ելնելով վերջնարդյունքից: Այն հնարավորություն է տալիս հասկանալ ներդրում–վերջնարդյունք կապը: Վերջնարդյունքի գնահատման եզրահանգմամբ համայնքն ապահովում է ծրագրի գնահատման զեկույց և ձևավորում ապագա ծրագրերի և բյուջեի մասին հստակ պատկերացում:

Այս գործընթացը ենթադրում է հետևյալ գործողությունները.

- Արդյունքների չափում. վերլուծության ենթակա ծրագրի ուղղակի արդյունքը (օրինակ՝ բժշկական ծառայություն ստացող շահառուների քանակը կամ կառուցված բուժհաստատությունների քանակը).
- Վերջնարդյունքի չափում. Վերլուծության ենթակա ծրագրի արդյունքները (օրինակ՝ առողջության, կրթության մակարդակի բարելավում և ժամանակի առկայություն).
- Ուսումնասիրվում են նաև բյուջեի կատարողականի ցուցիչները, որոնք սահմանված են բյուջեի տարբեր ոլորտների համար.
- Գնահատել ազդեցությունը և բարելավել հաջորդ բյուջետային ցիկլը.
- Նախապատրաստել ԳՁԲ հաշվետվություն՝ համայնքային խորհրդին և ՔՀԿ–ին.
- Իրականացնել գենդերային ցուցիչների վերլուծություն.
- Համայնքի բյուջեի բարելավման համար առաջարկությունների նախապատրաստում:

ԳՁԲ-Ի ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Հայաստանում գենդերազգայուն բյուջետավարումը շարունակում է ամրապնդվել որպես հանրային ֆինանսների կառավարման կարևոր գործիք՝ ուղղված գենդերային հավասարության խթանմանը: Տարածքային և ազգային մակարդակներում իրականացվող նախաձեռնությունները վկայում են այն մասին, որ ԳՁԲ-ն ոչ միայն տեխնիկական մեխանիզմ է, այլև՝ քաղաքական հանձնառություն՝ ապահովելու, որ պետական ծախսերը նպաստեն կանանց, տղամարդկանց և տարբեր խմբերի կարիքների հավասար ներկայացմանը:

ԳՁԲ-ն պահանջում է ոչ թե մեկանգամյա վերլուծություն, այլ՝ շարունակական մոտեցում, որը հիմք է ստեղծում հետևյալի համար.

Հանրային հաշվետվողականություն. ԳՁԲ-ն ապահովում է, որ բյուջետային գործընթացները լինեն թափանցիկ և ներառական՝ հաշվի առնելով բոլոր քաղաքացիների կարծիքները:

Քաղաքական կամքի ամրապնդում. ԳՁԲ-ի շարունակական կիրառումը վկայում է պետության պատրաստակամության մասին՝ ներդնել ռեսուրսներ գենդերային հավասարության ուղղությամբ:

Տվյալների վրա հիմնված որոշումներ. ԳՁԲ-ն խթանում է սեռով տարանջատված տվյալների օգտագործումը՝ ավելի արդար և արդյունավետ քաղաքականությունների մշակման համար:

Տարածքային ներառականություն. ԳՁԲ-ն հնարավորություն է տալիս համայնքներին ձևավորել տեղական բյուջեներ, որոնք արձագանքում են կանանց և տղամարդկանց տարբեր կարիքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ. ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Սեռ» և **«գենդեր»** հասկացությունների տարբերությունը

- **Սեռ**՝ կենսաբանական հատկանիշների ամբողջություն (իգական/արական):
- **Գենդեր**՝ սոցիալ-մշակութային դերեր, ակնկալիքներ և վարքագծային նորմեր, որոնք ձևավորվում են հասարակության ներսում:
    - Գենդերը կառուցվում է սոցիալական պրակտիկայի ընթացքում:
    - Ունի պատմական, կրոնական, տնտեսական, քաղաքական և մշակութային բաղադրիչներ:
    - Ժամանակի ընթացքում փոփոխվում է՝ մշակութային ազդեցության ներքո:

Գենդերային խտրականություն

- Ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նվազեցնում է կանանց կամ տղամարդկանց իրավունքների ճանաչումը կամ դրանցից օգտվելու հնարավորությունը, եթե անգամ միտումնավոր չէ, հանդիսանում է սեռով պայմանավորված կամ գենդերային խտրականություն:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

- ՄԱԿ-ում «գենդեր» եզրույթը գործածվում է 1985-ից:
- Նայրոբիի, Վիեննայի, Կահիրեի և Պեկինի համաշխարհային խորհրդաժողովներում ընդգծվել են գենդերային հիմնախնդիրները:
- Օգտագործվել են եզրույթներ՝ «գենդերային խտրականություն», «գենդերային բռնություն», «գենդերային դերեր», «գենդերային նորմեր» և այլն:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Արդարություն

- Արդարացի վերաբերմունքի գործընթաց է՝ հաշվի առնելով պատմական և սոցիալական անհավասարությունները:
- Հանգեցնում է հավասարության՝ ռազմավարությունների և միջոցառումների միջոցով:

Հավասարություն

- Նշանակում է՝ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ:
- Չի նշանակում՝ դառնալ նույնը, այլ՝ ունենալ հավասար պայմաններ՝ անկախ սեռից:
- Նշանակում է ցուցաբերել գենդերային զգայուն մոտեցում և վերաբերմունք:

Մարդու իրավունքների և զարգացման տեսանկյունից՝

- Գենդերային հավասարությունը **մարդու իրավունքների** խնդիր է:
- Համարվում է **մարդակենտրոն զարգացման** նախապայման և ցուցիչ:
- Չպետք է դիտարկվի որպես միայն կանանց խնդիր, այլ՝ ընդհանուր հասարակական նպատակ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում Միացյալ Թագավորության կառավարության կողմից:

Ուղեցույցը պատրաստվել է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում, Միացյալ Թագավորության կառավարության կողմից:

Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը: